Արթինը այդ ժամանակ երիտասարդ էր, դեռ չէր ամուսնացած: Նա, ի հարկէ, ծիծաղում է մոլեռանդ մահմեդականի առաջարկութեան վրայ, որը, մահմեդականների սովորութեամբ, իրան պարտաւորութիւն էր համարում, ամէն մի բարեխիղճ քրիստոնեայ տեսնելիս, ասել նրան. «ամեն ինչ քո մէջ լաւ է, միայն մի բան պակաս է, որ մահմեդական չես»:

Պարսիկը բաժանում է ոսկիների մի մասը եւ առաջարկում է Արթինին, բայց նա շնորհակալութեամբ մերժում է, ասելով.

— Ինչո՞ւ էք տալիս ինձ այդ ոսկիները. իմ պարտքն է ձեր աւանդը ամբողջութեամբ կա՛մ տեղ հասցնել, կա՛մ ձեզ վերադարձնել: Եւ եթէ ելուզակները չտարան, այդ ձեր բախտիցն էր:

Արթինը իր կեանքում դժբախտութիւններ, աղքատութիւններ շատ էր կրել, բայց երբեք նրա մեծահոգութիւնը թուլացած չէր: Վերջին անգամի դժբախտութեօնը աւելի ծանր եղաւ: Վարակիչ հիւանդութեամբ նրա ջորիները համարեա բոլորը կոտորուեցան: Նա մնաց առանց մի փարայի, եւ բացի դրանից մասնաւոր պարտքեր եւս ունէր: Բոլորը կատարելապէս սնանկացած էին համարում նրան: Շատ չանցաւ, կարծես մի հրաշքով կրկին կազմակերպեց նա իր քարաւանը եւ հարիւրից աւելի ջորիներով դղրդեցնում էր Արզրումի լեռները: Այդ յաջողութիւնը նրա բոլոր ծանօթներին զարմացրեց. մտածում էին, թէ նա որտեղի՞ց ձեռք բերեց այդքան փողեր: Մարդկանց երեւակայութիւնը զանազան կարծիքներ ստեղծեց նրա մասին. ոմանք ասում էին, թէ նա մի մեծ գանձ է գտել, ոմանք ասում էին, թէ նրա բարեկամ վաճառականները մի բաւական նշանաւոր գումար հաւաքեցին եւ տուեցին նրան, որ կրկին կազմակերպէ իր քարաւանը, ոմանք աւելի հեռու էին գնում, ասելով, թէ նա մի «անյայտ ձեռքիցէ փող է ստացել եւ այլն: Թէ այդ կարծիքներից ո՞րն էր ուղիղ, ո՞րն էր սխալ, այդ աւելորդ է քննել. այդքանը միայն ճշմարիտ էր, որ այժմ նրա ջորիներն ամենաընտիրներն էին, եւ նա Արզրումի հայ ջորեպանների մէջ առաջինն էր համարւում:

Երեկոյեան մութը դեռ բոլորովին չէր պատել, դեռ բաւական լոյս կար, երբ մեր քարաւանը անցնում էր Արտամեդի միջով: Արտամեդը առաջ մի փառաւոր քաղաք էր, իսկ այժմ՝ մի փառաւոր աւան: Նա ունէր մօտ հինգ հարիւր տուն բնակիչ, որոնց կէսից աւելին մահմեդականներ էին: Այդ աւանը Վանից երկու ու կէս ժամ հեռաւորութիւն ունի, գտնւում է լայնանիստ, եռանկիւնաձեւ բարձրութեան վրայ, որը, հետզհետէ խոնարհոելով, իջնում է մինչեւ ծովեզրը:

Գեղեցիկ է Արտամեդը իր ընդարձակ այգիներով, գեղեցիկ է նա իր բարձր, սքանչելի, ծովահայեաց դիրքով: Տասնեւութ դար առաջ այդ բարձ-